





Բազմաչափ
Ռուդոլֆ
Խաչատրյանը
Multidimensional
Rudolf
Khachatryan



Բազմաչափ
Ռուդոլֆ
Խաչատրյանը

...

Multidimensional
Rudolf
Khachatryan



CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

ԵՐԵՎԱՆ YEREVAN
2017

Պատկերագիրքը հրատարակվել է Գաֆէսնեան արվեստի կենտրոնում 2017 թ. մարտի 23-ից հունիսի 4-ը կազմակերպված «Բազմաչափ Ռուդոլֆ Խաչատրյանը» ցուցադրության առթիվ:

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14
Խ 282

Բազմաչափ Ռուդոլֆ Խաչատրյանը:
Երկվեզու կատալոգ.- Եր.:
Խ282 Գաֆէսնեան թանգարան
հիմնադրամ, 2017.- 72 էջ:

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14

Երախտիքի խոսք՝
Վահագն Մարաքյան
Գործադիր տնօրենի պաշտոնակատար
Գաֆէսնեան արվեստի կենտրոն

Ռուդոլֆ Խաչատրյանի երեք պատկերազրական սկզբունքները՝
Անտ Աբրահամյան
Մշակութաբան

Պատկերագրքի կազմող՝
Արմեն Եսայանց
Ցուցադրությունների գծով տնօրեն
Գաֆէսնեան արվեստի կենտրոն

Լ. Աբրահամյանի տեքստի անգլերեն թարգմանություն՝
Արծվի Բախչինյան

Կատալոգի ձևավորում՝
Էդիկ Պողոսյան

Ստեղծագործությունների լուսանկարներ՝
Ռուբեն Մարտիրոսյան (էջեր՝ 20-23, 25-26, 29-31, 44-47, 52-53)
Ասատուր Եսայանց (էջեր՝ 24, 28)
Ռուդոլֆ Խաչատրյանի ժառանգության հիմնադրամ (էջեր՝ 27, 34-43, 48-51, 55-57)
Հայաստանի ազգային պատկերասրահ (էջ՝ 33)
Ռուդոլֆ Խաչատրյանի արխիվային լուսանկարները տրամադրել են
Մերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն, լուսանկարիչ Զավեն Սարգսյանը
և Ռ. Խաչատրյանի դուստր Մարիամ (Մոկո) Խաչատրյանը

Տպագրություն՝
Տպագրված է «Նուշիկյան պրինտ» տպագրատանը
Երևան, Հայաստան

Պատկերագիրքը վաճառքի ենթակա չէ:

ISBN 978-9939-9160-0-2

© Գաֆէսնեան արվեստի կենտրոն, 2017
Սույն հրատարակության որևէ մաս չի կարող վերադարձվել
առանց Գաֆէսնեան արվեստի կենտրոնի գրավոր թույլտվության:

Շապիկին՝ Ռուդոլֆ Խաչատրյան, «Ինքնադիմանկար», 1966, 1981 (հատվածներ)

This catalog documents the exhibition
Multidimensional Rudolf Khachatryan organized
by and presented at the Cafesjian Center for the Arts,
March 23, 2017-June 4, 2017.

Acknowledgments:
Vahagn Marabyan
Acting Executive Director
Cafesjian Center for the Arts

Rudolf Khachatryan's Three Principles of Imagery:
Levon Abrahamian
Cultural Anthropologist

Author of the Catalog:
Armen Yesayants
Director of Exhibitions
Cafesjian Center for the Arts

English Translation of L. Abrahamian's text:
Artsvi Bakhchinyan

Catalog design:
Edik Boghosian

Photos of the artworks:
Ruben Martirosyan (pages: 20-23, 25-26, 29-31, 44-47, 52-53)
Asatur Yesayants (pages: 24, 28)
The Rudolf Khachatryan Heritage Foundation (pages: 27, 34-43, 48-51, 55-57)
National Gallery of Armenia (page: 33)
Rudolf Khachatryan's archival photos were provided by photographer
and director of Sergei Parajanov Museum **Zaven Sargsyan**,
as well as by the daughter of R. Khachatryan **Mariam (Moko) Khachatryan**

Printed at "Nushikyan print" printing house
Yerevan, Armenia

This catalog is not for sale.

ISBN 978-9939-9160-0-2

© Cafesjian Center for the Arts, 2017
No part of the content of this publication may be reproduced
without prior written permission from the Cafesjian Center for the Arts.

On Cover: **Rudolf Khachatryan**, *Self-portrait*, 1966, 1981 (details)

2017թ. մարտի 23-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնն սկսեց իր տարվա ցուցադրությունների ծրագիրը «Բազմաչափ Ռուդոլֆ Խաչատրյանը» ցուցադրությամբ, որով և նշանավորեց արվեստագետի ծննդյան 80-ամյակը:

Իր արվեստով Ռուդոլֆ Խաչատրյանն արտահայտում է տեսանելի և անտեսանելի աշխարհների սեփական պատկերացումները, որոնք հայտնվում են ինչպես երկչափ պատկերներում, այնպես էլ՝ տարածական հորինվածքներում, անդրադարձնելով արվեստագետի գաղափարներն ու տեսիլքը բազմաչափ տիեզերքի մասին:

Ցուցադրությանը ներկայացված են արվեստագետի հեղինակած 34 աշխատանքներ պետական և մասնավոր հավաքածուներից, որոնց ժամանակագրական և ռճային համադրությունը առիթ է ընծայում վերաբժնորելու Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործական ուղին և ժառանգությունը:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում բոլոր այն անձանց, ում ջանքերի շնորհիվ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում կայացավ «Բազմաչափ Ռուդոլֆ Խաչատրյանը» ցուցադրությունը:

Ցուցահանդեսի կայացմանը նպաստելու համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար պարոն Արմեն Ամիրյանին:

Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն պարոն Արման Ծատուրյանին և Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն տիկին Նունե Ավետիսյանին, ում հետ համագործակցության շնորհիվ կայացավ ցուցադրությունը:

Երախտիքի ջերմ խոսքեր ենք հղում Ռուդոլֆ Խաչատրյանի դստերը՝ նկարչուհի Մարիամ (Մոկո) Խաչատրյանին, «Ռուդոլֆ Խաչատրյանի ժառանգություն» հիմնադրամի տնօրեն Վսեվո-

լոդ Խաչատրյանին, ճարտարապետ և կոլեկցիոներ Արծվին Գրիգորյանի ընտանիքին, լուսանկարիչ Զավեն Սարգսյանին՝ իրենց հավաքածուներից նմուշներ և լուսանկարներ տրամադրելու համար:

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում նաև մշակութաբան Լևոն Աբրահամյանին, ում հեղինակած տեքստը կարեվոր ներդրում էր այս ցուցադրության պատկերագրի ստեղծման համար:

Ցուցադրության կազմակերպման և իրականացման համար իմ շնորհակալությունն եմ հայտնում Գաֆէսճեան արվեստի կենտրոնի անձնակազմին, ում նվիրումի և ջանքերի շնորհիվ կենտրոնը շարունակում է կյանքի կոչել Գաֆէսճեան ժառանգության տեսլականը Հայաստանում:

Վահագն Մարաբյան

Գործադիր տնօրենի պաշտոնակատար
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

A C K N O W L E D G E M E N T S

On March 23, 2017 the Cafesjian Center for the Arts began its annual exhibition program with the exhibition *Multidimensional Rudolf Khachatryan*, celebrating the artist's 80th birthday anniversary.

Through art Rudolf Khachatryan expresses his own perception of visible and invisible worlds, which appear both in two-dimensional images and spatial works, reflecting the artist's imagination and vision of a multidimensional universe. The exhibition presents 34 artworks from public and private collections. Their arrangement by chronology and style gives one an opportunity to reconsider Rudolf Khachatryan's creative path and heritage. To all whose efforts made the exhibition, *Multidimensional Rudolf Khachatryan*,

possible at the Cafesjian Center for the Arts, we express our profound gratitude. Special thanks to Mr. Armen Amiryan, the Minister of Culture of the Republic of Armenia, for supporting the realization of the exhibition.

We thank Mr. Arman Tsaturyan, Director of the National Gallery of Armenia and Mrs. Nune Avetisyan, Director of the Modern Art Museum of Yerevan, whose cooperation was essential for the success of this important initiative.

Our deep gratitude is extended to Rudolf Khachatryan's daughter, artist Mariam (Moko) Khachatryan, to the Director of The Rudolf Khachatryan Heritage Foundation, Vsevolod Khachatryan, to the family of architect and collector


Artsvin Grigoryan, and to photographer Zaven Sargsyan for graciously and generously providing artworks and photos from their collections.

A special note of appreciation is extended to cultural anthropologist Levon Abrahamyan, for his contribution in preparing the catalog text.

The Center's staff is to be commended for making this exhibition a success. With their dedication and commitment, the Center continues to fulfill the vision of the Cafesjian legacy in Armenia.

Vahagn Marabyan

Acting Executive Director
Cafesjian Center for the Arts



Ռուդոլֆ Խաչատրյանը
Մոսկվայի իր արվեստանոցում, 1977
Rudolf Khachatryan in his studio in Moscow, 1977



ՌՈՒԴՈՒՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՌԽ
8

Ռուդոլֆ Խաչատրյանի (1937-2007) ստեղծագործության ամենազարմանալի կողմերից մեկն այն է, որ նա փաստորեն չի սովորել նկարել, այլ, վերցնելով մատիտը, անմիջապես դրսևորել է իրեն որպես հասուն նկարիչ: Դա ակնհայտ է նրա՝ պահպանված սակավաթիվ մանկական գծանկարներում և պատանեկան տարիների աշխատանքներում («Փոքրիկ Գրետան», 1955, էջ 20, «Ջեմմայի դիմանկարը», 1958, էջ 21): Կարծես, նա իր մեջ կրում էր ոչ միայն անցյալի մեծ գծանկարիչների վարպետությունը, այլև՝ նրանց աշխարհընկալումը: Պատանի Ռուդոլֆը մեխից կախեց գործվածքի մի կտոր և սկսեց նկարել ծալազարդարանքներ՝ չմանալով, որ նույն կերպ էին վարվում անցյալի մեծ վարպետները: Ընդ որում, նկարածն այնքան էր նմանվում Լեոնարդոյի հայտնի ծալազարդարանքներին, որ Երվանդ Քոչարը, տեսնելով դրանք, բացականչեց. «Լեոնարդոյի ոգին ղոջ է»՝ առաջին անգամ արտասանելով պատանու համար դեռ անծանոթ հանճարեղ ֆլորենտացու անունը: Հետագայում՝ 1960-ականներին, Ռուդոլֆը հեռանում է իրապաշտական գծանկարից՝ ենթարկվելով մոդեռնիստական ուղղություններով տարվելու համընդհանուր միտումին («Ինքնադիմանկար», 1966, էջ 24, «Մայրություն»/կտավ/, 1965, էջ 25, «Մեղանխոյա», 1966, էջ 28, «Մարդը և ցուլը», 1969, էջ 30): Այդ շրջանում Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստին հատուկ էին «տարածության մեջ բաց ֆորմաները»,

Քոչարի օրինակով, երբ ամեն ինչ պատկերվում էր խորաբաց դատարկություններով («Տղամարդ և կին», 1971, էջ 31): Ընդ որում, երիտասարդ նկարիչը ձեռնարկում էր ստեղծել այդ դատարկությունները ոչ թե կամայական ֆորմալ ձևով, այլ մարդու մարմնից հեռացնելով առավելագույնս այն մասերը, որոնք դարձնում են իրեն հողածին, մարմնական: Դրանով հենց Ռուդոլֆը ստեղծում էր ոմն ասկետիկ և հոգևոր, իր խոսքերով՝ «Այլ աշխարհի մարդու» կերպարը («Կույրը», 1966, էջ 27):

1971 թ., արդեն բնակվելով Մոսկվայում, նա դարձյալ անդադառնում է իր մանկության իրապաշտական գծանկարին: Դա բնական շարունակություն էր, կարծես, չէր եղել ֆորմալիստական որոնումների միջանկյալ բուռն ու անհանգիստ շրջանը, որը նկարչին ճանաչում և համակրանք բերեց: Շատերը գիտեն և սիրում են Ռուդոլֆ Խաչատրյանին հենց այդ երկրորդ ռեալիստական շրջանի շնորհիվ («Երիտասարդություն», 1973, էջ 33, «Լեզվաբան Գյոզալյանի դիմանկարը», 1979, էջ 35, «Աբու-Լալա Մահարի», 1978, էջ 34, «Ինքնադիմանկար», 1981, էջ 36, «Նատալյա», 1981, էջ 37, «Մեկու», 1982, էջ 38, «Ծաղիկներով և խեցիով նատյուրմորտ», 1981, էջ 42, «Նկարչուհի Օլակայայի դիմանկարը», 1983, էջ 43): Մոսկվայում 1986 թ. հրատարակված իր գծանկարների ալբոմը 1980-ականների վերջի ամենատարածված և ցանկալի նվերներից էր: Այստեղ հարկն է համառոտ ուրվագր-

ծել Ռուդոլֆի տարանջատած «երեք դարաշրջանները»: Իր այս եռյակը համադրվում է Սուրբ Երրորդության հետ. ամեն շրջանում առաջին պլան են դուրս գալիս հաջորդաբար Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Առաջին դարաշրջանը քանդակի շրջանն է, և առաջին վարպետն էր այստեղ Աստված Արարիչը, ով ստեղծում, ծեփում է մարդուն երկրի հողից: Ընդ որում, առաջին քանդակագործն աշխատում էր ինքնանկարի ժանրում, քանի որ արարեց մարդուն իր պատկերով և նմանությամբ: Երկրորդ շրջանն ընթանում է Որդու նշանի ներքո: Ինչպես կարծում էր Ռուդոլֆը, առաջին երկչափ գեղանկարչական աշխատանքն էր Քրիստոսի «ինքնանկարը», որը նա ստեղծեց, կտավը դեմքին սեղմելով. առասպելի համաձայն, այդ դիմանկարն արվել էր Եղեսիայի արքա Աբգարի պատվերով, կամ էլ, ըստ ավելի ուշ լեգենդի, այն դաջվել էր Սուրբ Վերոնիկայի սրբիչի վրա: Երկրորդ շրջանը ներառում է առաջինի մասին հիշողությունն ու վերածնունդն՝ հասնելով իր գագաթնակետին: Զուր չէ, որ Վերածննդի ժամանակաշրջանում, առաջին հերթին հայտնաբերեցին հենց անտիկ քանդակները: Գեղանկարչության մեջ ի հայտ եկած հեռանկարն ու ծավալայնությունը նույնպես վերադարձ էին Հայր-քանդակագործի ծավալային գործերին: Եվ ահա, համաձայն Ռուդոլֆի, մոտենում է երրորդ՝ Սուրբ Հոգու շրջանը, որն արտահայտվում է գծանկարում:

RUDOLF KHACHATRYAN'S THREE PRINCIPLES OF IMAGERY

One of the most astonishing sides of Rudolf Khachatryan's (1937-2007) art is that he actually did not learn to draw, but proved himself immediately as a mature artist by taking a pencil in his hand. This becomes obvious from the few drawings extant from his childhood and further works from his teenage years (*Little Greta*, 1955, see p.20, *Jemma's Portrait*, 1958, see p.21). It seemed that he not only bore the mastery of great artists of the past, but also their world vision. Rudolf the teenager hung a piece of cloth on a nail and began to draw draperies, without knowing that his great predecessors had done the same. Besides, his drawings resembled so much Leonardo's famous draperies that Yervand Kochar was prompted to exclaim, "Leonardo's spirit is alive!", mentioning the Florentine genius' name, yet unknown to Rudolf. Then, in the 1960s, Rudolf departed from realistic drawing and went with the flow of the general modernist current (*Self-portrait*, 1966, see p.24, *Motherhood*, 1965, see p.25, *The Book Reader (Melancholy)*, 1966, see p.28, *The Man and the Bull*, 1969, see p.30). During this period, his art was characterized by "open forms in space", the art form followed by its founder Kochar, when gaping cavities here and there represented everything (*A Man and a Woman*, 1971, see p.31).

Young Rudolf sought to create these voids not in an arbitrarily formal way, but by removing from human anatomy those parts that make a creature earthly, carnal. Thus, he forged the image of a certain "man from the other world," as he called it, a human being who is ascetic and spiritual (*The Blind*, 1966, see p.27). In 1971, when he was already living in Moscow, Rudolf Khachatryan turned again to the realistic drawing of his childhood. It was a natural continuation, as if there was not an intermediate, rapid, and turbulent period of formalist search that brought fame and recognition to the painter. Many know and love Rudolf Khachatryan just because of the second realistic period (*Youth*, 1973, see p.33, *Linguist Gyzalyan's Portrait*, 1979, see p.35, *Abu-Lala Maari*, 1978, see p.34, *Self-portrait*, 1981, see p.36, *Natalya*, 1981, see p.37, *Moko*, 1982, see p.38, *Still-life with Flowers and Shell*, 1981, see p.42, *Artist Inna Olevskaya's Portrait*, 1983, see p.43). His album of drawings published in Moscow (1986) was one of the most popular and desirable gifts in the late 1980s. Here, we should briefly outline the "three eras", as classified by Rudolf himself. His triad refers to the Holy Trinity; Father, Son, and Holy Spirit are consistently nominated to the

fore in each era. The first era is that of sculpture, and here the first master is God the creator, who creates and sculpts the human being from the dust of the earth. The first sculptor worked in the genre of self-portrait, as he created Adam in his own image and likeness. The second epoch flows under the sign of the Son. According to Rudolf, the first two-dimensional painting was Christ's "self-portrait," which he created by applying a piece of blank canvas to his face; according to the legend, this portrait was made by the order of Abgar, King of Edessa, to cure him of his leprosy, or, according to a later legend, it was imprinted on the towel of St. Veronica. The second era incorporates the memory of the first one and revives it by taking it to its culmination. Not by chance, the classical sculptures were the first to be discovered during the Renaissance. Perspective and volume, which appeared in painting, were also a return to the dimensional creations of Father the sculptor. Now, according to Rudolf, the third era is approaching: the era of the Holy Spirit that is expressed in drawing. Each era, it should be noted, does not come under the sole dictates of sculpture, painting, or drawing. Thus, ancient artists painted their sculptures, i. e., something from the painting was already present in them.

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր դարաշրջան չի ընթանում բացարձակապես քանդակի, գեղանկարի կամ գծանկարի «գերակայությամբ»: Այսպես, հնագույն վարպետները ներկում էին իրենց քանդակները, այսինքն՝ դրանց մեջ արդեն առկա էր գեղանկարչության ինչ-որ տարր: Գծանկարը միշտ, եթե և ոչ ինքնուրույն, ապա օժանդակ միջոց էր, իսկ գեղանկարչական որոշ տեխնիկաներում, օրինակ՝ ֆլամանդականում, նույնիսկ կարևոր կառուցվածքային դերակատարություն ուներ՝ ծպտված մնալով նախապատրաստական շերտի հիմքում: Ըստ երևույթին, Ռուդոլֆի երեք շրջանները ոչ թե տարանջատված շրջաններ են, այլ ինչ-որ եռամիասնության պրոյեկցիաներ, որոնք բացահայտում են եռամիասնության այս կամ այն կողմերը տարբեր շրջաններում: Ըստ Ռուդոլֆի հորինվածքների տրամաբանության, գծանկարի շրջանում պետք է որ ի հայտ գան գեղանկարին ու քանդակին հատուկ սկզբունքները: Մենք կոտեսենք շուտով, որ այդպես էլ եղավ: Ավելին՝ ինչպես երկրորդ շրջանը «վերածնեց» քանդակը, երրորդ շրջանը պետք է «վերածներ» գեղանկարը: Դա ակնհայտ դարձավ, երբ 80-ականների սկզբին Ռուդոլֆը որոշեց նկարել լևկասի վրա՝ այն հիմնաշերտի, որի վրա ժամանակին նկարում էին սրբապատկերները: Եթե գրաֆիտը կամ սեպիան իրենց ուղին են գծում թղթի կամ սովորաբար թի կրավորական, «անկենդան» մակերեսների վրա՝ հաղթահարելով դրանց

իներտությունը, ապա նույն սեպիան լևկասի վրա լրիվ այլ հարաբերությունների մեջ է մտնում հիմնաշերտը կազմող «կենդանի» կավճի հետ: Հենց այդպիսի ակտիվ փոխհարաբերության շնորհիվ է, որ լևկասի վրա արած Ռուդոլֆի գծանկարները ստանում են գեղանկարի հատկություններ: Գրաֆիտի և կավճի միացումն անխուսափելիորեն բերում է հարուստ կիսատոների, վերջապես՝ ֆոնի առաջացմանը, այնպես որ լևկասի վրա գծանկարը նաև արտաքին նմանություն է ձեռք բերում գեղանկարի հետ («Հայելիով նատյուրմորտ», 1983, էջ 40, «Պատուհանի մոտ», 1982, էջ 41): Շեշտենք, որ սա ռուդոլֆյան գծանկարի զարգացման ներքին օրինաչափությունն է, այլ ոչ թե գեղանկարչությունն ընդօրինակելու արդյունք: 1988 թ. աշնանը Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործության մեջ նշմարվում է մեկ վերադարձ ևս, այն է՝ վերադարձ «բաց ֆորմաներին»: Այդ շրջանին սկիզբ տվեց մի աշխատանք, որ պատկերում էր Թովմաս Անհավատի հայտնի դրվագը: Երբ Ռուդոլֆն ավարտեց Թովմասի իրապաշտական պատկերը և սկսեց նկարել կենտրոնական՝ Քրիստոսի, ֆիգուրը, այն հանկարծ սկսեց ձեռք բերել «բաց ֆորմաների» շրջանի կերպարների առանձնահատկությունները. Քրիստոսի մարմնում հայտնվեցին բացվածքներ և խոռոչներ, և Թովմասն իր զննող մատը մտցրեց ոչ թե վերքերի, այլ Քրիստոսի մարմնում առկա խորաբաց դատարկությունների մեջ: Այդպես Ռուդոլֆ Խա-

չատրյանի ստեղծագործություն վերադարձավ իր «Այլ աշխարհի մարդը»: Եթե խստորեն հետևենք ժամանակագրությանը, ապա Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործության հաջորդ՝ լոնդոնյան փուլը (1989–1993)՝ ամբողջ իր ենթափուլերով հանդերձ, ընթանում էր գլխավոր կերպարի, կամ, Ռուդոլֆի խոսքերով՝ «մարդու բանաձևի» որոնումների ընդհանուր նշանի ներքո: Սկզբից նա նախորդ շրջանի երրոսների կերպարներից առանձնացրեց ընդամենը մարդկային պայմանական մի ֆիգուր, որը պահպանել էր մարդու դեմքի և մարմնի միայն հիմնական մասերը, սակայն՝ առանց սեռի հստակ նշմարմամբ: Այդ կերպարի օգնությամբ Ռուդոլֆն սկսում է ստեղծել տարբեր տիպի և նույնիսկ տարբեր ժանրերով բազմաթիվ աշխատանքներ: Այսպես, լևկասի՝ մեզ արդեն ծանոթ տեխնիկայով կատարած աշխատանքներից զատ («Կոմպոզիցիա 7», 1990, էջ 45), ի հայտ եկան թղթից և սովորաբար ստեղծված բարձրաքանդակներ և քանդակներ, որոնք խաղարկում էին սովորել որպես լիիրավ պատկերազրական միջոց («Պիետա», 1990, էջ 44): Կամ էլ տափակ քանդակի սովորել դառնում էր ինքնուրույն նկարների կամ բարձրաքանդակների մոդել: Այս որոնումներից յուրաքանչյուրը հեշտությամբ կարող էր ամբողջական ուղղությունների հիմք դառնալ, եթե Ռուդոլֆը ցանկանար կանգ առնել, այլ ոչ թե շարունակել համառ փնտրտուքները, որոնք առաջ էին մղվում ինչ-որ ոչ այն-

Drawing has always been if not an independent, yet a subsidiary mean, while in other painting techniques, such as the Flemish school, it even played an important structural role, while remaining hidden at the heart of preparation. Apparently, Rudolf's three epochs are not dissociated eras, but projections of a certain tripartite unity, which discloses particular sides in different eras. According to the logic of Rudolf's compositions, the principles inherent to paintings and sculptures should emerge in the era of graphics. Soon we will see that this is what happened. Moreover, in the same way that the second era "revived" sculpture, likewise the third era had to "revive" painting. This became apparent when in the early 1980s Rudolf decided to draw on gesso, the primer used to paint icons at the time.

If graphite or sepia draw their way on a passive, "dead" surface of paper or cardboard, overcoming their inertness, the same sepia on gesso enters into a completely different relationship with the "live" chalk, which constitutes the basis of the primer. Through this active interaction, Rudolf's drawings on gesso earn painting quality. The combination of graphite and chalk inevitably leads to rich semitones and finally to the appearance of

background. Thus, the drawing on gesso also acquires an external resemblance with a painting (*Still-life with Mirror*, 1983, see p.40, *By the Window*, 1982, see p.41). We should underscore that this is the developmental pattern of Rudolf's drawing, not an imitation of painting. In the fall of 1988 Rudolf Khachatryan's work outlined another return, this time to youth, namely, to open forms. The beginning of this period was marked by a work depicting a scene with doubting Thomas. When he finished a realistic portrait of Thomas and proceeded to the central figure of Christ, the latter suddenly began to acquire the features characteristic to Rudolf's period of "open forms": the same holes and cavities appeared, and Thomas put his examining finger not in the wound, but in the gaping voids of Christ's body. In this way, his Man from another world came back in Rudolf Khachatryan's work.

If we adhere strictly to the chronology, then the next, London era of Khachatryan's work (1989–1993), with all its periods, went under the common sign of the search for the main character or "human formula," as Rudolf called it. He first singled out the conventional human figure from the images of characters from the previous period and kept just the main universal parts of human face

and body, but without clear definition of sex. With this image, Rudolf began creating many works of various kinds and even in different genres. Thus, reliefs and flat sculptures appeared, playing up shadows as full-fledged visual means (*Pietà*, 1990, see p.44), in addition to works with the already familiar gesso technique (*Composition 7*, 1990, see p.45). The shadow of a plane sculpture became a model for independent pictures or reliefs. Each of these quests could easily become the basis for entire directions, if Rudolf had wished to stop, rather than to continue persistent searches, impelled by a super goal that was not very clearly perceived.

Rudolf repeatedly told me that there were three ways to picture the world. First, when you accurately and masterfully picture the outside world on paper, canvas, or in sculpture. The second way is when it is also possible to recreate the miracle on which the depiction of the outside world is based. Finally, there is the third, the supreme and most elusive method: when you create a non-existent world, and at the same time "breathe" the miracle of real life into it. This is the world of art, for example, of ancient Egyptians or modern traditional societies. It can be said, although simplifying a little bit, that in the first periods of his work,



Լևոն Աբրահամյանն ու իր դիմանկարը,
1980-ականներ
Levon Abrahamian and his portrait, 1980s

քան գիտակցվող գերնպատակով:
Ռուդոլֆն ինձ հաճախ ասում էր, որ գոյություն ունի աշխարհը պատկերելու երեք եղանակ: Առաջինը, երբ դու թղթի, կտավի վրա ճշգրտությամբ և վարպետորեն արտացոլում ես արտաքին աշխարհը կամ էլ մարմնավորում ես այն քանդակում: Երկրորդ եղանակն է, երբ քեզ հաջողվում է վերարտադրել նաև այն հրաշքը, որ արտացոլվող արտաքին աշխարհի հիմքում է ընկած: Եվ, վերջապես, կա երրորդ՝ ամենադժվար հասանելի եղանակ, երբ դու ստեղծում ես գոյություն չունեցող աշխարհ, քայքայողանում ես նրա մեջ ներշնչել իրական կյանքի հրաշքը: Այդպիսին է, օրինակ, հին եգիպտացիների կամ ժամանակակից ափանդական հասարակությունների արվեստի աշխարհը: Մի փոքր պարզունակեցնելով կարելի է ասել, որ Ռուդոլֆ Խաչատրյանն իր ստեղծագործության առաջին փուլերում հաջողության էր հասել գլխավորապես աշխարհի արտացոլման առաջին երկու եղանակներում: Իսկ իր ստեղծագործության վերջին փուլը հենց «երրորդ ճանապարհն» է: Ռուդոլֆ Խաչատրյանն ստեղծում է ինչ-որ մի բան, որ գոյություն չունի իրական կյանքում, սակայն օժտված է կյանքի հրաշքով:

Այդուհանդերձ, ինչ գոյություն չունեցող աշխարհ է դա, և ինչ էականեր են այն բնակեցնում: Եթե հետևենք Ռուդոլֆ Խաչատրյանի աշխատանքների գլխավոր կերպարի հայտնության ներքին տրամաբանությանը, ապա կարելի է

Rudolf Khachatryan excelled mainly in the first two methods of depicting the world. The last stage of his work was the "third way." Rudolf Khachatryan creates something inexistent in the real world, but endowed with the miracle of life.

What kind of inexistent world is this and what creatures inhabit it? If we follow the internal logic of the revelation of the main character in Rudolf Khachatryan's work, we can say that this creature was born of an ordinary mother. Indeed, I am simplifying, but still the artist spotted most clearly the beginning of his future conjoined character in the image of motherhood. This is understandable, because it is the mother who is naturally and forever ready for duplication; she is who bears the second, another little being, who comes out from the depths of her body and remains associated to her for a long time, sometimes for life. Rudolf Khachatryan draws the mother with the baby, the eternal theme in art, and the baby gradually becomes a part of the mother's body, which happens so naturally that we do not even wonder how it happened (*Figure*, 1991, see p.46, *Untitled*, 1992, see p.47, *Two Resting Figures*, 1991, see p.53). We have learned that the child is always in the arms of his mother; he is as close to her as if he is grown

ասել, որ նա ծնվել է սովորական մի մորից: Իհարկե, ես մի քիչ սխեմատիկորեն եմ ուրվագծում, բայց իր ապագա երկմիասնական կերպարը նկարիչն առանձնապես նկատեց հենց մայրության կերպարում: Եվ դա հասկանալի է. չէ՞ որ մայրը միշտ պատրաստ է կրկնավորման, նա իր մեջ է կրում երկրորդին՝ փոքրիկ մարդուկին, ով, դուրս գալով իր մարմնից, երկար ժամանակ, երբեմն ամբողջ կյանքի ընթացքում կապված է մնում իր հետ: Ռուդոլֆ Խաչատրյանը պատկերում է մորը մանկան հետ, արվեստում այդ հավերժական թեման, և հետզհետե մանուկը դառնում է մոր մարմնի մասը, բայց դա կատարվում է այնքան բնականորեն, որ անգամ հարց չի ծագում՝ ինչպես դա տեղի ունեցավ («Ֆիգուր», 1991, էջ 46, «Ավերնագիր», 1992, էջ 47, «Երկու պառկած ֆիգուր», 1991, էջ 53): Մենք սովոր ենք, որ մանուկը միշտ մոր գրկին է, որ նա առափելագույն չափով մոտ է իրեն, կարծես ներաճել է վերջինիս մեջ: Ռուդոլֆ Խաչատրյանը փաստորեն վերացնում է «կարծես»-ը և այնքան վարպետորեն, որ դա նույնիսկ չենք նկատում: Առաջին հայացքից թվում է, որ մայրը սեղմել է երեխային իր կրծքին, բայց հետո գլխի ես ընկնում, որ մանուկը մոր մարմնի կեսն է, իր երեսը մոր դեմքի կառուցվածքի մաս է, իսկ փոքրիկ ոտքը՝ մոր մի ոտքն է: Պարզապես նկարիչն այնպես է այն տեղադրել, որ ոչ մի անհամապատասխանություն չես զգում: Սակայն, եթե մոր պարագայում նման միաձու-

լումը բնական է և հասկանալի, ապա Ռուդոլֆ Խաչատրյանն ավելի հեռու է գնում. նման մանուկ հայտնվում է ցանկացած մարդու մեջ: Այդպես մայրության նախասկզբնական երկվությունն օգնեց Ռուդոլֆին մանուկ բացահայտել յուրաքանչյուրիս մեջ: Երևի զուր չէ, որ դեռ 1965 թ. նա արժանացավ հատուկ մեդալակի «Մայրություն» կտավի համար («Մայրություն» /սովարաթուղթ/, 1965, էջ 29):

Արվեստագետի հաջորդ քայլը կապված է այն հանգամանքի հետ, որ երկմիասնական կերպարի կեսերը ձեռք են բերում համեմատական ինքնուրույնություն. նրանք սկսում են ինչ-որ հարաբերությունների մեջ մտնել մյուս երկմիասնական էակների կեսերի հետ: Հասկանալի է, որ հենց նկարիչը բնակեցնում է իր կտավները էլ ավելի երկմիասնական ֆիգուրներով, դրանց բաղադրիչները սկսում են էլ ավելի լայնածավալ փոխհարաբերությունների մեջ մտնել: Հենց դա է տեղի ունենում մի շարք աշխատանքներում (հմտ. «Կոմպոզիցիա 11», 1995, էջ 50, «Կոմպոզիցիա 7», 1990, էջ 45): Բացի այդ, երկմիասնական կերպարը ոչ միայն ապրում է իրեն հատուկ կանոնների համաձայն, այլև՝ հակում ունի բազմանալ համարյա թե կենսաբանական սկզբունքով: Այսպես, «Բազմացում» նկարների շարքում «բաց ֆորմաներով» էակների խռոչները բաճախորեն ծնում են նույնատիպ էակներ, երբեմն «նորածինները» պարզապես վխտում են մեծ կենտրոնական մարմնի

վրա, որի բացվածքներն անսանձելորեն ներգրավվում են ինքնաբազմացման գործընթացներին (հմտ. «Վազող մարդը 2», 1992, էջ 49):

Մեզ մնում է հետևել, թե ինչ նոր զարգացում է ստանում Ռուդոլֆ Խաչատրյանի երկմիասնական հերոսը, ինչպես են նրա բաղադրիչների երկու վիճակները, որոնց տարափոխմամբ նա զբաղվում էր երկար ժամանակ, վերջապես բյուրեղանում «կանոնիկ» տեսքով. այսուհետև «երեխան» սկսեց նայել մեզ դիմահայաց ինքնամիտ ժպիտով, իսկ «մայրը» կողք շրջեց գլուխը, և իր կողապատկեր քիթը, սրանալով, ծգվեց կտուցի նման («Հանապարհ դեպի բազմաչափ օբյեկտ (Ֆիգուր 3)», 1993, էջ 48):

